

# Տեղի ունեցավ հանդիպում վիրավոր զինձառայողների և նրանց հարազատների հետ

23.06.2016

Գեղարքունիքի մարզպետարանում հրավիրված հանդիպման ժամանակ ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ Թեքեյան մշակութային հիմնադրամի կողմից դրամական աջակցություն ստացան ապրիլյան քառօրյա մարտական գործողություններում վիրավորում ստացած 13 զինձառայողներ: Հանդիպումը բացեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, շեշտելով, որ Արցախյան ապրիլյան քառօրյա հերոսամարտերի ընթացքում իրենց հերոսական կողմերով են դրսևորել Գեղարքունիքի մարզի ինչպես ժամկետային զինձառայողները, այնպես էլ կամավորները: Հազարից ավելի մարդիկ են կամավորագրվել և մեկնել Արցախ, առաջնագծին ցուցաբերվել է մեծածավալ նյութական օգնություն: Մեր ժամկետայինները փառավոր սխրանքներ են գործել ռազմադաշտում: Ապրիլյան իրադարձությունները համախմբեցին մեր ազգին մեկ ընդհանուր նպատակի շուրջ, և այսուհետ էլ այդ համախմբումը պետք է ամրապնդվի: Մենք մեր հնարավորության սահմաններում օգնել ու օգնում ենք զոհված ու վիրավոր զինձառայողների ընտանիքներին, կամավոր առաջնագիծ մեկնածներին և այն կարծիքին ենք մնում, որ հայրենիքի համար կյանքը կամ առողջությունը կորցրած զինձառայողների ընտանիքները պետք է շարունակական աջակցություն ստանան, որպեսզի կարողանան հնարավորինս հաղթահարել իրենց սոցիալական, առողջական ու առօրյա խնդիրները՝նշեց Ռաֆիկ Գրիգորյանը, միաժամանակ տեղեկացնելով, որ ՀՀ Սփյուռքի նախարարությունն ապրիլյան քառօրյայից անմիջապես հետո օգնության կոչով դիմել է համայն հայությանը՝ նյութապես աջակցելու զոհված կամ վիրավորում ստացած զինձառայողների ընտանիքներին, ովքեր, իրենց հասած դժբախտության հետ մեկտեղ, հայտնվել են նաև կարիքի մեջ: Այդ կոչին արձագանքել է Թեքեյան մշակութային հիմնադրամը, որի տնօրեն Արմեն Ծուլիկյանն անձամբ էր ներկայացել հանդիպմանը՝ ապրիլյան քառօրյա մարտերում վիրավորված զինձառայողներին դրամական աջակցություն հատկացնելու նպատակով: Հանդիպմանը մասնակցում էր նաև ՀՀ Սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանը, ով իր խոսքում դրվատեց մեր հերոս զինձառայողների անուրանալի սխրանքը: Ուզում եմ գլուխ խոնարհել այս հանդիպմանը ներկա հերոսների և առհասարակ բոլոր մյուս հերոս տղաների մայրերի առջև, ովքեր նման հերոս տղաներ են ծնել: Նրանք, իրենց սխրանքով պատնեշելով թշնամուն, փրկել են Արցախի ու Հայաստանի քաղաքացիների կյանքը, մեր հայրենիքը: Մեր նախարարությունը զոհված և վիրավոր զինձառայողների ցանկը ներկայացրել է Սփյուռքի կազմակերպություններին: Արվում է հնարավորը, որ այդ օգնությունը լինի ոչ թե միանվագ, այլ շարունակական, որպեսզի իրենց զավակներին կորցրած ընտանիքները, բուժման ու կենսական խնդիրներ ունեցող վիրավոր զինձառայողները կարողանան սոցիալական խնդիրներ լուծել, հոգալ իրենց առօրյա հոգսերը: Կփորձենք նաև անհատական օգնություններ կազմակերպել,-հանդիպման մասնակցի վիրավոր զինձառայողներին և նրանց ծնողներին դիմեց Ֆիրդուս Զաքարյանը: Ապրիլյան քառօրյա հերոսամարտերը պլեկոծեցին համայն հայությանը, և մեր տղաների հերոսական ջանքերի շնորհիվ մենք այժմ բաց ճակատով ենք նայում աշխարհին, հավատով՝ մեր վաղվա անվտանգ օրվան: Գեղարքունիքի մարզում սա մեր առաջին մասնակցությունն է աջակցության տեսքով, բայց աշխատանքներ ենք տանում, որ այն լինի շարունակական-հավաստեց Թեքեյան մշակութային հիմնադրամի տնօրեն Արմեն Ծուլիկյանը: Ապա տնօրենը անձամբ օգնություն հանձնեց Ապրիլյան հերոսամարտերում վիրավորում ստացած ժամկետային զինձառայողներ, Գավառ քաղաքը ներկայացնող Նորայր Զախարյանին, ԼՃափ գյուղը ներկայացնող Գեորգ Բաղդասարյանին, Շատջրեք գյուղը ներկայացնող Անդրանիկ Աթալյանին,

Վարդենիս քաղաքը ներկայացնող Արմեն Միմոնյանին Հայկ Մինասյանին, Ճամբարակ քաղաքը ներկայացնող Համբարձում Վարդանովին եւ Գուրգեն Առուստամյանին, Սեւան քաղաքը ներկայացնող Դավիթ Ազիզյանին, Լիճք գյուղը ներկայացնող Հրայր Բաղդասարյանին, Սոթք գյուղը ներկայացնող Ավետիս Զարգարյանին, Փոքր Մասրիկը ներկայացնող Ռուբեն Գեւորգյանին: Դրամական աջակցություն ստացողների շարքում էր նաեւ ԵԿՄ Գավառի բաժանմունքի նախագահ Աշոտ Գասպարյանը, ով վիրավորվել էր Մարտակերտում: Մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, եւս մեկ անգամ մեծարելով ապրիլյան հերոսամարտերում կենաց-մահու գնով թշնամուն կանգնեցրած քաջերին, հավաստիացրեց, որ հայրենի կառավարությունը, մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները շարունակելու են իրենց հնարավորությունների սահմաններում թեթեւացնել հայրենիքի հերոս պաշտպանների ընտանիքների հոգսերը, Հայոց բանակին ու նրա մարտիկներին սատար են կանգնելու բոլոր խնդիրներում: Կփորձենք ձեզ աջակցել աշխատանքի տեղավորման հարցում, ամենատարբեր խնդիրներում, ուր կբավարարեն մեր հնարավորությունները: Ձեր ու ձեր զոհված ընկերների մասին հպարտությամբ կխոսեն նաեւ ձեր եղբայրներն ու կրտսեր ընկերները, ովքեր, որպէս ապագային հայ զինվորներ, կոգեշնչվեն ձեր հերոսական կերպարներով: Կեցցեք դուք, - ասաց մարզպետը:

Առողջություն եւ մաղթում բոլոր հայ զինվորներին, լինեն ողջ թե վիրավոր, որպէսզի ամեն մեկը ողջ ու առողջ վերադառնա կարոտած ընտանիք: Շնորհակալ ենք ուշադրության ու աջակցության համար՝ իր խոսքը հնչեցրեց Վարդենիս քաղաքի բնակիչ, վիրավոր զինծառայողի մայր Սուսաննա Գեւորգյանը: